

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ

<https://doi.org/10.59982/18294359-23.14-ha-02>

Աշոտ Վարազդատի Մաթևոսյան

տնտ. դոկտոր, պրոֆեսոր
ՀՊՏՀ, ֆինանսների ամբիոն
matashan@mail.ru

Անի Չոհրաբի Գրիգորյան

ասպիրանտ
ՀՊՏՀ, ֆինանսների ամբիոն
anigrigoryan176@gmail.com

Ամփոփագիր

2021 թվականին ՀՀ պետական պարտքը կազմել է 9 մլրդ 226 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 15.8%, որի գերակշիռ մասը՝ 6 մլրդ 643 մլն դոլար, կազմել է արտաքին պետական պարտքը: Պետական պարտքի նվազեցմանը ուղղված ՀՀ Կառավարության իրականացվելիք քաղաքականության հիմնական շեշտադրումները երկնիշ տնտեսական աճի ապահովման և արտահանմանը միտված քաղաքականության մասին են:

ՀՀ արտաքին պարտքի բեռի նվազման համատեքստում առանցքային նշանակություն ունի ներքին փոխառու շուկայի զարգացումը, միջազգային կապիտալի շուկայում մասնակցության պրոգրեսիայի ապահովումը, արտահանումը խթանող քաղաքականության իրականացումը: Ուստի կարևորում ենք նշված գործիքակազմերի ապահովումը զուգակցել հարկաբյուջետային գործող կանոնների հետ՝ ապահովելով հարկաբյուջետային շրջահայացություն:

Մեր կողմից նախկինում կատարված ուսումնասիրության արդյունքում առաջադրած այն թեզը, որ իրական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև գոյություն ունի ուժեղ կապ թույլ տվեց հետևություն անել, որ պետական պարտատոմսերի գնման ծավալների աճը՝ երկարաժամկետ հորիզոնում, զգալիորեն կարող է թուլացնել պետական պարտքի կառուցվածքում արտաքին փոխառու միջոցներից ՀՀ կախվածությունը՝ նվազեցնելով նաև տոկոսադրույքի շուկի նկատմամբ զգայունությունը, ինչը մեր նախորդ՝ «ՀՀ պետական պարտքի կայունության վերլուծության գնահատումը Արժույթի միջազգային հիմնադրամի MAC DSA մեթոդաբանությամբ» հետազոտության արդյունքում գնահատվել էր բարձր:

ՀՀ արտաքին պետական պարտքը պատերազմական և «Covid»-յան ժամանակահատվածներում թեև սպասարկվել է առանց խոչընդոտների, այնուամենայնիվ, կարծում ենք ՀՀ պետական պարտքի կառավարելիության ապահովման համար պարտքի կառավարման հիմքում պետք է դրվի ոչ թե պարտքի մեծության կամ ծավալների շարունակական աճի կրճատման խնդիր, այլ վերջինիս օգտագործման արդյունավետության բարձրացման նպատակադրում, ինչը կնպաստի տնտեսական աճին՝ հնարավորինս չեզոքացնելով պետական պարտքի սպասարկման ռիսկը:

ՀՀ Կառավարության կողմից ֆիսկալ կոնսոլիդացման արդյունքում 2022 թվականին արձանագրված Պարտք-ՀՆԱ հարաբերակցության 46,7 տոկոս ցուցանիշն ամենացածր ցուցանիշն էր նախորդող 5 տարիների համեմատ, ինչը ՀՀ-ին կհաղորդի ավելի բարձր հոսսալիության և վարկունակության երաշխիք՝ ֆինանսական շուկաների ինտեգրման խորացման համատեքստում:

Հիմնաբաներ: ՀՀ արտաքին պարտք, պարտքի կառավարում, պետական պարտատոմս, տնտեսական ակտիվության ցուցանիշ, փոխարժեք:

Ներածություն:

Հոդվածում հետազոտական նպատակ է հանդիսացել ՀՀ պետական պարտքի կառուցվածքային առանձնահատկությամբ պայմանավորված պարտքի կառավարման բարելավման մեր կողմից առաջարկվող նոր մոտեցման իրատեսականության հիմնավորումը, որի իրականացման ընթացքում խնդիր է դրվել գնահատել վերջին տարիներին ՀՀ արտաքին պետական պարտքի և պետական պարտատոմսերի ծավալների, միջին ամսական աշխատավարձի, տնտեսական ակտիվության ցուցանիշի, փոխարժեքի, պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի ազդեցության դրսևորումները: Կատարված գնահատումների արդյունքները վկայում են գոյություն ունեցող դրական կապի մասին:

Հետազոտության համար մեթոդաբանական հիմք է հանդիսացել «Pearson correlation coefficient» (r) գործակցով գնահատման, բազմակի գծային ռեգրեսիայի մեթոդները:

ՀՀ արտաքին պարտքի կառավարման բարելավման նպատակով մեր կողմից առաջարկվող մոտեցման մեթոդաբանական վերլուծության ընթացքում հետազոտական խնդիրներ են հանդիսացել.

- Գնահատել ՀՀ ամսական միջին աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև եղած հարաբերակցու-

թյունը «Pearson correlation coefficient»-ի գործակցով (r):

- Գնահատել ՀՀ ամսական միջին աշխատավարձի և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև հարաբերակցությունը՝ կորելացիայի և ռեգրեսիայի մեթոդներով:
- Գնահատել ՀՀ պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի և ՀՀ արտաքին պետական պարտքի միջև կապը՝ բազմակի ռեգրեսիայի մեթոդով:
- Գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների հարաբերակցությունը՝ կորելացիոն գործակցով:
- Գնահատել Հայաստանի Հանրապետությունում դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների հարաբերակցությունը՝ կորելացիոն գործակցով:
- Գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշները՝ ռեգրեսիայի մեթոդով:

- Գնահատել Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության, դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պետական պարտքի հարաբերակցությունը՝ բազմակի կորեկացիոն գործակցով:

Վերլուծություն

2022 թվականի տարեվերջին ՀՀ պետական պարտքը՝ դրամային արտահայտությամբ կազմել է 4,479.5 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճը կազմելով 4,9 տոկոս: Տարեվերջին ՀՀ Կառավարության պարտքը՝ դրամային արտահայտությամբ կազմել է 4,252.5 մլրդ դրամ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ աճելով 4,2 տոկոսով [Մաթևոսյան, Գրիգորյան]:

2022 թ.-ին որոշակիորեն աճել է նաև ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի ցուցանիշը՝ տարեվերջին կազմելով 227.0 մլրդ դրամ: Դիտարկվող ժամանակաշրջանում աճման միտում է դրսևորվել թե՛ ներքին, թե՛ արտաքին պարտքի ցուցանիշներում: Մասնավորապես՝ 2021 թվականի տարեվերջին ՀՀ ներքին պետական պարտքը դրամային արտահայտությամբ կազմել է 1,237.4 մլրդ դրամ՝ 2022 թվականին՝ 1,267.8 մլրդ դրամ, արտաքին պետական պարտքը՝ համապատասխանաբար կազմել է 2021 թ.-ին 3,192.2 մլրդ դրամ, 2022 թ.-ին 3,211.7 մլրդ դրամ:

Ընդհանուր առմամբ՝ թեև ՀՀ պետական պարտքն աճել է, այնուամենայնիվ, ՀՀ կառավարությանը հաջողվել է ֆիսկալ կոնսոլիդացման արդյունքում 2022 թվականի տարեվերջին Պարտք – ՀՆԱ հարաբերակցությունը նվազեցնել 47 տոկոսի, մինչդեռ 2021 թվականի կանխատեսմամբ ծրագրային ցուցանիշը կանխատեսվում էր նվազել 60 տոկոսից ցածր մակարդակի:

ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական տվյալներում 2022 թվականին ՀՀ պե-

տական պարտքի կառուցվածքը Էական փոփոխության է ենթարկվել: Համեմատության համար կարող ենք նշել, որ եթե 2021 թվականի ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պարտքի տեսակարար կշիռը 70.6 տոկոս էր կազմում, ապա 2022 թվականին արտաքին պարտքի տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 63.4 տոկոս:

Այս համատեքստում, կարևորում ենք նշել, որ դիտարկվող ժամանակահատվածում պետական պարտքի կառուցվածքում ավելացել է ներքին պարտքի տեսակարար կշիռը՝ 2021 թվականին կազմելով 29.4 տոկոս, իսկ 2022 թվականին կազմելով 36.6 տոկոս:

Թեև արտաքին պետական պարտքի կառավարելիության առումով որոշակի ռիսկեր են առաջացել, այնուամենայնիվ, կարծում ենք, որ պարտք-ՀՆԱ հարաբերակցության 2022 թվականի ցուցանիշը հետևանք էր ոչ միայն արտաքին գործոնների ազդեցության, այլև՝ պետական որակյալ քաղաքականության:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ արտաքին վարկային միջոցների ներգրավումը պարունակում է արտարժույթային ռիսկ, կարծում ենք ներքին պետական պարտքի շուկայի զարգացումը հնարավորինս կթուլացնի արժույթային ռիսկը, ինչը շոշափելի է արտաքին պետական պարտքի ռիսկերի գնահատման տեսանկյունից:

Արտաքին պետական պարտքի նվազեցման և առհասարակ պարտքային որակյալ քաղաքականության իրականացման համատեքստում առանցքային նշանակություն ունի Կառավարության կարողությունը պարտքի սպասարկման հատկացումների մասով, ինչպես նաև արտարժույթով ներգրավված վարկերը, որոնք պարունակում են փոխարժեքային տատանումների ռիսկ, քանի որ որքան շատ դրամական միջոցներ հատկացվեն պարտքի սպասարկմանը, այնքան ավելի սա-

կալ միջոցներ կգեներացվեն կապիտալատեղծ ուղղություններ: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ արտարժույթային անբարենպաստ տատանումների պարագայում հնարավոր է ավելանան արտաքին պարտքի սպասարկմանն ուղղվող ծախսերը՝ մեծացնելով պարտքի սպասարկմանն ուղղվելիք ֆինանսական ռեսուրսների պահանջը:

Սակայն, արտաքին պարտքի կառավարելիության առումով որոշակի ռիսկեր են առաջացել: Տարեսկզբին արձանագրված պարտք-ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը Էապես ապահովվել է ազգային արժույթի արժևորմամբ:

Թեև արտաքին պետական պարտքի սպասարկումը «թանկացել է» նախորդ տարվա համեմատ, այնուամենայնիվ, դրամի արժևորումը Էականորեն կոմպենսացրեց պարտքի սպասարկման ռիսկը:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը մեծապես ֆինանսավորվել է ներքին փոխառու միջոցների հաշվին՝ 79.2%-ով կամ 252.0 մլրդ դրամով, մինչդեռ արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է 20.8% կամ 66.2 մլրդ դրամ:

2023 թվականի ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի տեսակարար կշիռը կանխատեսվում է 58.6 տոկոսի սահմանում: 2022 թվականի տարեվերջին այս ցուցանիշը կազմել է 63.4 %: Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին ցուցանիշը կազմել է 78%:

Վերջին տարիների ցուցանիշները փաստում են, որ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքի տեսակարար կշիռը զիջել է իր դիրքերը՝ ի հաշիվ ներքին պարտքի ծավալների աճի: Այս միտումը ՀՀ կառավարության պետական պարտքի կառավարման ռազմավարության մաս կազմելուց զատ, բարենպաստ ազդեցություն է ու-

նենում նաև փոխարժեքային ռիսկերի նվազեցման տեսանկյունից:

2021 թվականին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված 180.8 մլրդ դրամ տոկոսավճարներից 60%-ը կամ 108.3 մլրդ դրամը կազմել են ներքին տոկոսավճարները, իսկ արտաքին պարտքի գծով վճարված տոկոսավճարները կազմել են 40% կամ 72.5 մլրդ դրամ:

2022 թվականին ՀՀ պետական բյուջեից ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված տոկոսավճարների գերակշիռ մասն ուղղվել է ներքին պարտքի սպասարկմանը՝ 63.5% կամ 125.9 մլրդ դրամ, իսկ արտաքին պարտքի սպասարկմանը 36.5% կամ 72.4 մլրդ դրամ, որից արտաքին աղբյուրներից ստացված վարկերի գծով տոկոսավճարների սպասարկումը կազմել է 17.7 տոկոս կամ 35.0 մլրդ դրամ:

ՀՀ արտաքին պարտքի սպասարկման թանկացումն արձագանքն է նաև լողացող տոկոսադրույքով ներգրավված պարտքի: ՀՀ պարտքի կառուցվածքում լողացող տոկոսադրույքով ստանձնած պարտավորությունները կազմում են շուրջ 18 տոկոսը, ուստի տոկոսադրույքի անբարենպաստ փոփոխությունը թանկացնում է ստանձնած պարտավորության սպասարկումը:

ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքում կան օտարերկրյա արժույթով ներգրավված վարկեր, որոնց սպասարկման տոկոսադրույքները բարձրանում են ՀՆԱ աճին զուգընթաց: Ըստ կանխատեսումների 2023 թվականին վերջիններիս տեսակարար կշիռը պարտքի կառուցվածքում կկազմի շուրջ 3.6 տոկոս, մինչդեռ 2022 թ.-ին այն կազմել է 2 տոկոս:

ՀՀ պարտքի սպասարկումը թանկացել է նաև պետական պարտքի կառուցվածքում դրամային պարտքի ավելացման հետևանքով, քանի որ ՀՀ-ում ի տարբերություն արտաքին պարտքի 4.1 տոկոսու միջին կշռված

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

տոկոսադրույքի, ներքին պարտքի տոկոսադրույքը կազմում է 10.9 տոկոս:

Հիմք ընդունելով մեր կողմից նախկինում կատարված հետազոտության արդյունքները, որում հիմնավորվել էր իրական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև գոյություն ունեցող դրական կապը [Գրիգորյան, ՀՀ կապիտալի շուկայում շրջանառվող] (տե՛ս Աղյուսակ 1), հետազոտության ընթացքում գնահատել ենք 2013-2022 թվականներին ՀՀ ամսական միջին աշխատավարձի և ՀՀ պետական պարտատոմսերի ծավալների միջև կապը՝ կորելացիոն գործակցով:

Սփիրմանի աստիճանի հարաբերակցության գործակցի համաձայն՝ եթե արդյունքը -

1 է, հետևաբար հարաբերակցությունը համարվում է բացասական, 0-ի մոտ լինելու դեպքում՝ գծային հարաբերակցություն գոյություն չունի, իսկ եթե արդյունքը գրեթե մոտ է 1-ի, ապա հարաբերակցությունը համարվում է դրական:

ՀՀ իրական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև գոյություն ունեցող կապի Սփիրմանի աստիճանի հարաբերակցության գործակցով իրականացված գնահատման արդյունքները թույլ են տալիս հաստատելու, որ X-ի և Y-ի փոփոխականների միջև գոյություն ունցող կապը գնահատվում է դրական [Գրիգորյան, ՀՀ արտաքին պետական պարտքի]:

Աղյուսակ 1.

Spearman's rank correlation coefficient (rs)	
Results $r_s = 0.5285$	
Parameter	Value
Spearman's rank correlation coefficient (rs)	0.5285
P-value	0.06333
Covariance	88833.7193
Sample size (n)	13
Statistic	2.0649

Իրական աշխատավարձի և պետական պարտատոմսերի հարաբերակցության գնահատումն ըստ Սփիրմանի աստիճանի հարաբերակցության գործակցի

Առաջարկվող մոտեցման իրատեսականության հիմնավորման տեսանկյունից՝ հետազոտության ընթացքում իրականացված

կորելացիոն գնահատում արդյունքում ընտրված փոփոխականների միջև առկա է նկատելի կապ (տե՛ս Աղյուսակ 2.):

Աղյուսակ 2.

Թվական	ՀՀ ամսական միջին աշխատավարձը, մլն դրամ, x	Պետական պարտատոմսերի ծավալը, մլն դրամ, y	X_i^2	$X_i Y_i$	Y_i^2
2013	0,146	103,5	0,021	15,1	10712,3
2014	0,159	104,1	0,025	16,6	10836,8
2015	0,171	103	0,029	17,6	10609,0
2016	0,174	100,7	0,030	17,5	10140,5
2017	0,178	107,7	0,032	19,2	11599,3
2018	0,173	105,6	0,030	18,3	11151,4

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

2019	0,183	107,8	0,033	19,7	11620,8
2020	0,189	92,5	0,036	17,5	8556,3
2021	0,204	105,8	0,042	21,6	11193,6
2022	0,236	114,2	0,056	27,0	13041,6
Ընդամենը	1,813	1044,9	0,334	190,0	109461,6
Միջին ցուցանիշ	0,181	104,5	0,033	19,0	10946,2

Հայաստանի Հանրապետությունում ամսական միջին աշխատավարձի

[ՀՀ Վիճ. կոմիտե, 2023 թ.] և տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալի կորելացիայի գործակցի հաշվարկը (2013 - 2022 թթ.)

$$r_{xy} = \frac{\overline{XY} - \bar{X}\bar{Y}}{\sigma_x \sigma_y}$$

$$\sigma_x = \sqrt{\overline{X^2} - (\bar{X})^2}$$

$$\sigma_y = \sqrt{\overline{Y^2} - (\bar{Y})^2}$$

$$\sigma_x = \sqrt{0,033 - 0,032} = 0,032$$

$$\sigma_y = \sqrt{10946,2 - 10920,3} = 5,09$$

$$r_{xy} = \frac{19-18,9}{5,09 \times 0,032} = \mathbf{0,625}$$

Գնահատման արդյունքում, քանի որ կորելացիայի գործակիցը ստացանք **0,65**, ուստի կարող ենք փաստել, որ Հայաստանի

Հանրապետության միջին ամսական աշխատավարձի և տեղաբաշխված պետական պարտատոմսերի ծավալի միջև կապը *նկատելի է*:

Հաշվի առնելով ընտրված փոփոխականների միջև դրական կապը, իրականացրել ենք ռեգրեսիոն գնահատում 2013-2022 թթ. Հայաստանի Հանրապետության ամսական միջին աշխատավարձի և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև (տե՛ս Աղյուսակ 3):

Աղյուսակ 3.

Թվական	ՀՀ ամսական միջին աշխատավարձը, մլն դրամ, x	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն դրամ, y	X_i^2	$X_i Y_i$	$\hat{Y}_x = a_0 + a_1 x$
2013	0,146	1375,4	0,021	200,8	2244,5
2014	0,159	1592,0	0,025	253,1	2245,0
2015	0,171	1862,0	0,029	318,4	2245,5
2016	0,174	2080,3	0,030	362,0	2245,6
2017	0,178	2378,1	0,032	423,3	2245,7
2018	0,173	2412,0	0,030	417,3	2245,5
2019	0,183	2540,1	0,033	464,8	2245,9
2020	0,189	2926,2	0,036	553,1	2246,2
2021	0,204	2972,4	0,042	606,4	2246,7
2022	0,236	2319,7	0,056	547,4	2248,0
Ընդամենը	1,8	22458,2	0,334	4146,6	22458,6

Հայաստանի Հանրապետության ամսական միջին աշխատավարձի և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների [ՀՀ ՖՆ պարտքի ամփոփ տվյալներ] ռեգրեսիայի հաշվարկ (2013-2022 թթ.)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

$$\begin{cases} na_0 + a_1 \sum x = \sum y \\ a_0 \sum x + a_1 \sum x^2 = \sum xy \end{cases}$$

$$\begin{cases} 10a_0 + 1,8a_1 = 22458,2 \\ 1,8a_0 + 0,334a_1 = 4146,6 \end{cases}$$

$$\begin{cases} 10a_0 + 1,8a_1 = 22458,2 \\ 1,08a_0 + 1,8a_1 = 2486,9 \end{cases}$$

$$8,92a_0 = 19971,3$$

$$a_0 = \mathbf{2238,9}$$

$$22389 + 1,8a_1 = 22458,2$$

$$a_1 = \mathbf{38,4}$$

Հետևաբար միագործոն ռեգրեսիայի մոդելը կլինի՝

$$\hat{Y}_x = 2238,9 + 38,4x$$

Արդյունքում, ՀՀ ամսական միջին աշխատավարձի ցուցանիշի փոփոխությունը կբերի

ՀՀ պետական պարտքի -0,24%-ի փոփոխություն:

Ընդհանուր առմամբ գնահատման նման արդյունքը կանխատեսելի էր՝ հաշվի առնելով աշխատավարձի ունեցած մակարդակը:

Այս համատեքստում՝ հիմք ընդունելով գնահատման արդյունքները, իրականացրել ենք նաև արտաքին պետական պարտքի 2013-2022 թթ. արձանագրած ցուցանիշների և որպես առաջնային ազդեցության փոփոխականներ դիտարկված պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի միջև ռեգրեսիոն գնահատում (տե՛ս Աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

	ՀՀ Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընթացիկ գներով, մլն.դրամ, X ₁	ՀՀ ՀՆԱ, շուկայական գներով, մլն. դրամ, X ₂	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն դրամ, Y	X ₁ ²	X ₁ X ₂	X ₁ Y	X ₂ ²	X ₂ Y	Ŷ _x
2013	1071370,6	4555638,2	1375,4	1147834962544,4	4880776831716,9	1473563123,2	20753839409299,2	6265824780,3	1740,0
2014	1144762,7	4828626,3	1592,0	1310481639311,3	5527631280479,0	1822462218,4	23315631945051,7	7687173069,6	1811,3
2015	1167744	5043633,2	1862,0	1363626049536,0	5889672407500,8	2174339328,0	25438235856142,2	9391245018,4	1846,6
2016	1171107,3	5067293,5	2080,3	1371492308113,3	5934344409092,6	2436254516,2	25677463415142,2	10541490668,1	1851,0
2017	1237780,8	5564493,3	2378,1	1532101308848,6	6887622968468,6	2943566520,5	30963585685744,9	13232921516,7	1940,7
2018	1341690,6	6017035,2	2412,0	1800133666128,4	8072999567709,1	3236157727,2	36204712598039,0	14513088902,4	2048,3
2019	1565488,9	6543321,8	2540,1	2450755496023,2	10243497647028,0	3976498354,9	42815060178355,2	16620691704,2	2235,2
2020	1560655,3	6181902,6	2926,2	2435644965418,1	9647819056773,8	4566789538,9	38215919755886,8	18089483388,1	2196,2
2021	1683831,5	6982962,5	2972,4	2835288520392,3	11758132220818,7	5005020750,6	48761765276406,2	20756157735,0	2350,2
2022	2063127,2	8496777,9	2319,7	4256493843379,8	17529933597848,9	4785836165,8	72195234681928,4	19709975694,6	2729,2
Ընդամենը	14007558,9	59281684,5	22458,2	20503852759695,3	86372429987436,5	32420488243,7	364341448801996,0	136808052477,4	20748,7

Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների [ՀՀ Վիճ. կոմիտե, ՀՀ Պետ. բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, 2023], ՀՀ համախառն ներքին արդյունքի [ՀՀ Վիճ.կոմիտե, Համախառն ներքին արդյունք, 2023] և ՀՀ արտաքին պետական պարտքի [ՀՀ Վիճ. կոմիտե, ՀՀ արտաքին պետական պարտք, 2023] բազմակի ռեգրեսիայի հաշվարկը (2013 - 2022 թթ.)

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հողվածում իրականացրել ենք ՀՀ տնտեսական ակտիվության և արտաքին պետական պարտքի ցուցանիշների գծով կորելացիոն և ռեգրեսիոն գնահատումներ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ պետական պարտքի նվազեցման ռազմավարության

մեջ հիմնական շեշտադրումը կատարվում է բարձր տնտեսական աճի ապահովմանը՝ որպես պարտքային բեռի սպասարկման միջոցների ապահովման կենսական աղբյուր (տե՛ս Աղյուսակ 5):

Աղյուսակ 5.

Թվական	Տնտեսական ակտիվության ցուցանիշը, Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), x	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), y	X_i^2	$X_i Y_i$	Y_i^2
2013	103,5	104,3	10712,3	10795,1	10878,5
2014	104,1	97,2	10836,8	10118,5	9447,8
2015	103,0	114,1	10609,0	11752,3	13018,8
2016	100,7	111,1	10140,5	11187,8	12343,2
2017	107,7	114,8	11599,3	12364,0	13179,0
2018	105,6	100,4	11151,4	10602,2	10080,2
2019	107,8	104,5	11620,8	11265,1	10920,3
2020	92,5	104,7	8556,3	9684,8	10962,1
2021	105,8	109,7	11193,6	11606,3	12034,1
2022	114,2	97,0	13041,6	11077,4	9409,0
Ընդամենը	1044,9	1057,8	109461,6	110453,4	112273,0
Միջին ցուցանիշ	104,5	105,8	10946,2	11045,3	11227,3

Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների կորելացիայի գործակցի հաշվարկ (2013-2022թթ.)

$$\sigma_x = \sqrt{10946,2 - 10920,3} = 5,1$$

$$\sigma_y = \sqrt{11227,3 - 11193,6} = 5,8$$

$$r_{xy} = \frac{11045,3 - 11056,1}{5,1 \times 5,8} = - 0,37$$

Գնահատման արդյունքում, քանի որ կորելացիայի գործակիցը ստացանք - **0,37**, կարող ենք փաստել, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի և արտաքին պարտքի ցուցանիշների միջև կապը դիտարկվող ժամանակահատվածում գնահատվել է թույլ՝ հաշվի առնելով ուսումնասիրության տարիներին արձանագր-

ված տնտեսական ակտիվության ցածր տեմպերը:

Հաշվի առնելով վերոնշյալ փոփոխականների գնահատման արդյունքները, նպատակահարմար ենք համարել իրականացնել նաև ՀՀ տնտեսական ակտիվության ցուցանիշի և ՀՀ արտաքին պարտքի ցուցանիշների գծով ռեգրեսիոն գնահատում (տե՛ս Աղյուսակ 6):

$$\begin{cases} 10a_0 + 1044,9a_1 = 1057,8 \\ 1044,9a_0 + 109461,6a_1 = 110453,4 \\ 1048a_0 + 109461,6a_1 = 110857,4 \\ 1044,9a_0 + 109461,6a_1 = 110453,4 \end{cases}$$

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

$$3,1a_0 = 404$$

$$a_0 = 130,2$$

$$1302 + 1044,9a_1 = 1057,8$$

$$a_1 = -0.24$$

Հետևաբար, միագործոն ռեգրեսիայի մոդելը կլինի.

$$\hat{Y}_x = 130,2 - 0,24x$$

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի փոփոխությունը կբերի ՀՀ պետական պարտքի -0,24%-ի փոփոխության:

Աղյուսակ 6.

Թվական	Տնտեսական ակտիվության ցուցանիշը, Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), x	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), y	X_i^2	$X_i Y_i$	$\hat{Y}_x = a_0 + a_1 x$
2013	103,5	104,3	10712,3	10795,1	105,4
2014	104,1	97,2	10836,8	10118,5	105,2
2015	103,0	114,1	10609,0	11752,3	105,5
2016	100,7	111,1	10140,5	11187,8	106,0
2017	107,7	114,8	11599,3	12364,0	104,4
2018	105,6	100,4	11151,4	10602,2	104,9
2019	107,8	104,5	11620,8	11265,1	104,3
2020	92,5	104,7	8556,3	9684,8	108,0
2021	105,8	109,7	11193,6	11606,3	104,8
2022	114,2	97,0	13041,6	11077,4	102,8
Ընդամենը	1044,9	1057,8	109461,6	110453,4	1051,2

Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի [ՀՀ Վիճ. կոմիտե, Տնտեսական ակտիվության ցուցանիշը, 2023] և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների ռեգրեսիայի հաշվարկ (2013-2022թթ.)

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականի ընթացքում դրամի արժևորումը էապես նպաստեց ՀՀ պարտքի բարեհաջող սպասարկմանը, որը վերջին տարիներին թանկացել է ի հաշիվ ներքին պարտքի սպասարկմանն ուղղվող միջոցների ավելացման,

ատենախոսական աշխատանքի այս ենթահարցում իրականացրել ենք արտարժույթային փոխարժեքի (ԱՄՆ դոլարի) և ՀՀ արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև գնահատում (տե՛ս Աղյուսակ 7):

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ

Թվական	Արտարժույթային փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), x	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), y	X_i^2	$X_i Y_i$	Y_i^2
2013	100,00	104,3	10000,0	10430,0	10878,5
2014	101,54	97,2	10310,4	9869,7	9447,8
2015	114,91	114,1	13204,3	13111,2	13018,8
2016	100,54	111,1	10108,3	11170,0	12343,2
2017	100,46	114,8	10092,2	11532,8	13179,0
2018	100,06	100,4	10012,0	10046,0	10080,2
2019	99,47	104,5	9894,3	10394,6	10920,3
2020	101,78	104,7	10359,2	10656,4	10962,1
2021	103,02	109,7	10613,1	11301,3	12034,1
2022	86,48	97,0	7478,8	8388,6	9409,0
Ընդամենը	1008,3	1057,8	102072,5	106900,6	112273,0
Միջին ցուցանիշ	100,8	105,8	10207,3	10690,1	11227,3

Հայաստանի Հանրապետությունում դոլարի փոխարժեքի [ՀՀ Վիճակագրական կոմիտե, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը, 2023] և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների կորելացիայի գործակցի հաշվարկ (2013-2022թթ.)

$$\begin{cases} 10a_0 + 1008,3a_1 = 1057,8 \\ 1008,3a_0 + 102072,5a_1 = 106900,6 \\ 1012a_0 + 102072,5a_1 = 107049,4 \\ 1008,3a_0 + 102072,5a_1 = 106900,6 \end{cases}$$

$$3,7a_0 = 148,8$$

$$a_0 = \mathbf{40,2}$$

$$402 + 1008,3a_1 = 1057,8$$

$$a_1 = \mathbf{0,65}$$

Հետևաբար միագործոն ռեգրեսիայի մոդելը կլինի.

$$\hat{Y}_x = 40,2 + 0,65x$$

Գնահատման արդյունքում կորելացիայի գործակիցը ստացանք **0,65**, կարող ենք

փաստել, որ դոլարի փոխարժեքի և Հայաստանի Հանրապետության պետական արտաքին պարտքի ցուցանիշների միջև կապը նկատելի է:

Հաշվի առնելով ընտրված փոփոխականների միջև կորելացիոն գնահատման արդյունքները, նպատակահարմար ենք համարել իրականացնել նաև ՀՀ-ում դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պարտքի ցուցանիշների գծով ռեգրեսիոն գնահատում (տե՛ս Աղյուսակ 8):

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ

Թվական	Արտարժույթային փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), x	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), y	X_i^2	$X_i Y_i$	$\hat{Y}_x = a_0 + a_1 x$
2013	100,00	104,3	10000,0	10430,0	105,2
2014	101,54	97,2	10310,4	9869,7	106,2
2015	114,91	114,1	13204,3	13111,2	114,9
2016	100,54	111,1	10108,3	11170,0	105,6
2017	100,46	114,8	10092,2	11532,8	105,5
2018	100,06	100,4	10012,0	10046,0	105,2
2019	99,47	104,5	9894,3	10394,6	104,9
2020	101,78	104,7	10359,2	10656,4	106,4
2021	103,02	109,7	10613,1	11301,3	107,2
2022	86,48	97,0	7478,8	8388,6	96,4
Ընդամենը	1008,3	1057,8	102072,5	106900,6	1057,4

Հայաստանի Հանրապետությունում դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պարտքի նախորդ տարիների համեմատ տոկոսային արտահայտությամբ ցուցանիշների ռեգրեսիայի հաշվարկ (2013-2022թթ.)

Հաշվարկները՝ հեղինակի կողմից:

$$\sigma_x = \sqrt{10207,3 - 10160,6} = 6,8$$

$$\sigma_y = \sqrt{11227,3 - 11193,6} = 5,8$$

$$r_{xy} = \frac{10690,1 - 10664,6}{6,8 \times 5,8} = \mathbf{0,65}$$

Այսպիսով, Հայաստանի Հանրապետությունում դոլարի փոխարժեքի փոփոխությունը կհանգեցնի ՀՀ պետական պարտքի 0,65%-ի փոփոխության:

$$\sigma_{x_1} = \sqrt{\bar{X}_1^2 - (\bar{X}_1)^2}$$

$$\sigma_{x_2} = \sqrt{\bar{X}_2^2 - (\bar{X}_2)^2}$$

$$\sigma_y = \sqrt{\bar{Y}^2 - (\bar{Y})^2}$$

$$r_{xy} = \frac{\bar{X}\bar{Y} - \bar{X}\bar{Y}}{\sigma_x \sigma_y}$$

$$r_{y(x_1 x_2)} = \sqrt{\frac{r_{x_1 y}^2 + r_{x_2 y}^2 - 2r_{x_1 y} r_{x_2 y} r_{x_1 x_2}}{1 - r_{x_1 x_2}^2}}$$

$$\sigma_{x_1} = \sqrt{10946,2 - 10920,3} = 5,1$$

$$\sigma_{x_2} = \sqrt{10207,3 - 10160,6} = 6,8$$

$$\sigma_y = \sqrt{11227,3 - 11193,6} = 5,8$$

$$r_{x_1 y} = \frac{5,1 \times 5,8}{11045,3 - 11056,1} = -0,37$$

$$r_{x_2 y} = \frac{10690,1 - 10664,6}{6,8 \times 5,8} = 0,65$$

$$r_{x_1 x_2} = \frac{10517,9 - 10533,5}{5,1 \times 6,8} = -0,45$$

$$r_{y(x_1 x_2)} = \sqrt{\frac{0,14 + 0,42 - 0,22}{1 - 0,2}} = \mathbf{0,65}$$

Այսպիսով, բազմակի կորելացիայի գործակիցը ստացանք **0,65**, ինչը նշանակում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի, դոլարի փոխարժեքի և ՀՀ պետական արտաքին պարտքի միջև կապը *նկատելի է* (տե՛ս Աղյուսակ 9):

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Աղյուսակ 9.

Թվական	Տնտեսական ակտիվության ցուցանիշը, Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), X_1	Արտարժույթին փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), X_2	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), Y	X_1^2	X_1X_2	X_1Y	X_2^2	X_2Y
2013	103,5	100,00	104,3	10712,3	10350,0	0795,1	10000,0	10430,0
2014	104,1	101,54	97,2	10836,8	10570,3	10118,5	10310,4	9869,7
2015	103,0	114,91	114,1	10609,0	11835,7	11752,3	13204,3	13111,2
2016	100,7	100,54	111,1	10140,5	10124,4	11187,8	10108,3	11170,0
2017	107,7	100,46	114,8	11599,3	10819,5	12364,0	10092,2	11532,8
2018	105,6	100,06	100,4	11151,4	10566,3	10602,2	10012,0	10046,0
2019	107,8	99,47	104,5	11620,8	10722,9	11265,1	9894,3	10394,6
2020	92,5	101,78	104,7	8556,3	9414,7	9684,8	10359,2	10656,4
2021	105,8	103,02	109,7	11193,6	10899,5	11606,3	10613,1	11301,3
2022	114,2	86,48	97,0	13041,6	9876,0	11077,4	7478,8	8388,6
Ընդամենը	1044,9	1008,26	1057,8	109461,6	105179,3	110453,4	102072,5	106900,6
Միջին ցուցանիշ	104,5	100,8	105,8	10946,2	10517,9	11045,3	10207,3	10690,1

Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության, դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պետական պարտքի բազմակի կորելացիայի հաշվարկը, 2013 – 2022 թթ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

$$\sum_{j=1}^n na_0 + a_1 \sum X_1 + a_2 \sum X_2 = \sum Y$$

$$\sum_{j=1}^n a_0 \sum X_1 + a_1 \sum X^2 + a_2 \sum X_1X_2 = \sum X_1Y$$

$$a_2 = 0,7$$

Հետևաբար բազմագործոն ռեգրեսիայի մոդելը կլինի.

$$\hat{Y}_x = 26,1 + 0,1X_1 + 0,7X_2$$

Բազմակի ռեգրեսիայի հաշվարկները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի, դոլարի փոխարժեքի տատանումները հանգեցնում են ՀՀ արտաքին պետական պարտքի համապատասխանաբար 0,1 և 0,7 տոկոսի փոփոխության (տե՛ս Աղյուսակ 10):

$$\sum_{j=1}^n a_0 \sum X_2 + a_1 \sum X_1X_2 + a_2 \sum X_2^2 = \sum X_2Y$$

$$10a_0 + 1044,9a_1 + 1008,26a_2 = 1057,8$$

$$1044,9a_0 + 109461,6a_1 + 105179,3a_2 = 110453,4$$

$$1008,26a_0 + 105179,3a_1 + 102072,5a_2 = 106900,6$$

$$a_0 = 26,1$$

$$a_1 = 0,1$$

Աղյուսակ 10.

Թվական	Տնտեսական ակտիվության ցուցանիշը, Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), X ₁	Արտաբժութային փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), X ₂	ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ (%), Y	X ₁ ²	X ₁ X ₂	X ₁ Y	X ₂ ²	X ₂ Y	Ŷ _x
2013	103,5	100,00	104,3	0712,3	10350,0	10795,1	10000,0	10430,0	06,5
2014	104,1	101,54	97,2	0836,8	10570,3	10118,5	10310,4	9869,7	07,6
2015	103,0	114,91	114,1	0609,0	11835,7	11752,3	13204,3	13111,2	16,8
2016	100,7	100,54	111,1	140,5	10124,4	11187,8	10108,3	11170,0	06,5
2017	107,7	100,46	114,8	1599,3	10819,5	12364,0	10092,2	11532,8	07,2
2018	105,6	100,06	100,4	1151,4	10566,3	10602,2	10012,0	10046,0	06,7
2019	107,8	99,47	104,5	1620,8	10722,9	11265,1	9894,3	10394,6	06,5
2020	92,5	101,78	104,7	556,3	9414,7	9684,8	10359,2	10656,4	06,6
2021	105,8	103,02	109,7	1193,6	10899,5	11606,3	10613,1	11301,3	08,8
2022	114,2	86,48	97,0	3041,6	9876,0	11077,4	7478,8	8388,6	8,1
Ընդամենը	1044,9	1008,26	1057,8	09461,6	105179,3	110453,4	102072,5	106900,6	071,3

Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության, դոլարի փոխարժեքի և ՀՀ արտաքին պետական պարտքի բազմակի ռեգրեսիայի հաշվարկը, 2013 – 2022 թթ.:
Հաշվարկները՝ հեղինակի կողմից:

Եզրակացություն:

Հոդվածում կատարված գնահատումների արդյունքներն ամփոփված են հետևյալ հիմնական մոտեցումներում.

- Կիրառված գործակցային գնահատումները թույլ են տալիս հիմնավորելու, որ իրական աշխատավարձի ինդեքսի, միջին ամսական աշխատավարձի և պետական պարտատոմսերի միջև գոյություն ունեցող դրական կապը, ինչպես նաև միջին ամսական աշխատավարձի և արտաքին պետական պարտքի ցուցանիշների միջև գնահատման արդյունքները թույլ են տալիս նշել, որ ապագա հեռանկարում իրական աշխատավարձի բարձրացումը կարող է նպաստել ՀՀ պետական պարտքի կառուցվածքում արտաքին պետական պարտքից կախվածության թուլացմանը:

- Դիտարված ժամանակահատվածում պետական բյուջեի եկամուտների, պաշտոնական տրանսֆերտների, ՀՀ համախառն ներքին արդյունքի փոփոխությունը դրական ազդեցություն են ունեցել արտաքին պետական

պարտքի նվազման ուղղությամբ, որոնք ևս առանցքային գործոններ են պարտքի նվազեցման համատեքստում:

- Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի և արտաքին պարտքի ցուցանիշների միջև կապը դիտարկվող ժամանակահատվածում կորելացիայի և ռեգրեսիայի գործակիցներով գնահատման արդյունքներում թույլ է:

- Արտարժույթային փոխարժեքի (ԱՄՆ դոլարի) և Հայաստանի Հանրապետության պետական արտաքին պարտքի ցուցանիշների միջև կապը կորելացիոն և ռեգրեսիոն գործակիցներով գնահատման արդյունքում կապը նկատելի է:

- Հայաստանի Հանրապետության տնտեսական ակտիվության ցուցանիշի, դոլարի փոխարժեքի և ՀՀ պետական արտաքին պարտքի միջև կապը բազմակի կորելացիայի և բազմակի ռեգրեսիոն մեթոդով գնահատման արդյունքում կապը նկատելի է:

Գրականության ցանկ

1. Գրիգորյան Ա. «ՀՀ արտաքին պետական պարտքի կառավարման բարելավման մոտեցումը՝ ըստ SHAPIRO-WILK test-ի. Սփիրմանի աստիճանի հարաբերակցության գնահատման արդյունքները», Արցախի պետական համալսարան գիտական հոդվածների ժողովածու 2023 (1), Երևան
2. Գրիգորյան Ա. - «ՀՀ կապիտալի շուկայում շրջանառվող պետական պարտատոմսերի վարքագծի և փոխարժեքի ազդեցության դրսևորումները արտաքին պետական պարտքի կառավարման համատեքստում», Էջեր 141-145 («Տարածաշրջան և աշխարհ» 2022, №1). http://geopolitika.am/dir/wp-content/blogs.dir/1/files/2022_1_141_145.pdf
3. Մաթևոսյան Ա., Գրիգորյան Ա., «ՀՀ արտաքին պետական պարտքի վրա տնտեսական ակտիվության ցուցանիշի աճի և արտարժույթային տատանումների ազդեցության գնահատման մոտեցումը» ՀՀ գիտակրթական միջազգային կենտրոն «մրցունակ կրթության եվ գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում» գիտական հոդվածների ժողովածու միջազգային գիտաժողովի նյութեր հունիսի 21, Երևան 2023, ISSN 2579-2903, էջեր 327-347, https://www.isec.am/images/gitakan_hrarakumner/Gitajoxov_2023.pdf
4. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Միջին ամսական անվանական աշխատավարձը, դրամ/2023, 03/02/2023թ.

<https://www.armstat.am/am/?nid=12&id=08001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

5. ՀՀ ֆինանսների նախարարություն, պետական պարտքի վերաբերյալ հաշվետվություններ և տեղեկագրեր, 05/02/2023թ.
https://www.minfin.am/hy/page/hashvetvutyunner_e_vichakagrutyun1/
6. ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ Պետական բյուջեի եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, ընթացիկ գներով, մլն.դրամ / 2023, 05/02/2023թ.
<https://www.armstat.am/am/?nid=12&id=17004>
7. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Համախառն ներքին արդյունք, շուկայական գներով, մլն. դրամ / 2023, 03/02/2023թ.
<https://www.armstat.am/am/?nid=12&id=01001&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
8. ՀՀ Վիճակագրական կոմիտե, ՀՀ արտաքին պետական պարտք, մլն. ԱՄՆ դոլար / 2023, 04/02/2023թ.
<https://www.armstat.am/am/?nid=12&id=17007&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>
9. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Տնտեսական ակտիվության ցուցանիշը, % / 2023, 03/02/2023թ., <https://www.armstat.am/am/?nid=12&id=01510>
10. ՀՀ Վիճակագրական կոմիտե, Արտարժույթային փոխարժեքներ, դրամ / 1 ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքը / 2023, 04/02/2023թ.,
<https://www.armstat.am/am/?nid=12&id=17010&submit=%D5%93%D5%B6%D5%BF%D6%80%D5%A5%D5%AC>

APPROACHES TO ASSESSMENT OF RA FOREIGN STATE DEBT

Ashot Matevosyan

Doctor of Economics, Professor

ASUE, Department of Finance

matashan@mail.ru

Ani Grigoryan

PhD student

ASUE, Department of Finance

anigrigoryan176@gmail.com

Abstract

In 2021, the RA state debt amounted to 9 billion 226 million US dollars, compared to the previous year, the increase was 15.8%, the majority of which, 6 billion 643 million dollars, was the foreign state debt. The main emphasis of the RA Government's policy aimed at reducing the state debt is about ensuring double-digit economic growth and export oriented policy.

In the context of the reduction of the external debt burden of RA, the development of the internal borrowing market, ensuring the progression of participation in the international capital market, and the implementation of policies promoting exports are of key importance. Therefore, it is important to combine the provision of the mentioned tools with the existing fiscal rules, ensuring fiscal prudence.

As a result of our previous study, the thesis that there is a strong relationship between real wages and government bonds, therefore, the increase in the volume of government bond purchases in the long-term horizon can significantly weaken the structure of the government debt from external borrowings. Armenia's

dependence, reducing the sensitivity to interest rate shocks, which is what our previous "Assessment of the stability analysis of RA public debt using the MAC DSA methodology of the International Monetary Fund" was rated highly as a result of the research.

Although the foreign state debt of RA was serviced without any obstacles during the war and "Covid" periods, we believe that in order to ensure the manageability of the RA state debt, the basis of debt management should not be the problem of reducing the size of the debt or the continuous growth of volumes, but of increasing the efficiency of its use. goal setting, which will contribute to economic growth, neutralizing the risk of public debt servicing as much as possible.

As a result of fiscal consolidation by the RA Government, the Debt-GDP ratio of 46.7 percent recorded in 2022 was the lowest rate compared to the previous 5 years, which will give RA a guarantee of higher reliability and creditworthiness in the context of deepening the integration of financial markets.

Keywords: RA foreign debt, debt management, government bonds, economic activity index, exchange rate.

Ներկայացվել է՝ 23.03.2023թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 15.05.2023թ.